

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովիկ Աբրահամյանի, Գալուստ Սահակյանի, Արման Սահակյանի, Հերմինե Նաղդալյանի, Արաիկ Հովհաննիսյանի, Մարտին Սարգսյանի և Վազգեն Կարախանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հուլիսի 24-ի ՀՕ-200 օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.1.-րդ հոդվածով.

«Հոդված 14.1. Տեղական ինքնակառավարման օր՝ նշվում է նոյեմբերի 10-ին:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի ընդունման վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ 1996 թվականի նոյեմբերի 10-ին, երբ կայացան տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքների ղեկավարների և ավագանու անդամների անդրանիկ ընտրությունները, մեր երկրում դրվեց գաղափարական և քաղաքական առումով նախադեպը չունեցող տեղական ինքնակառավարման նոր ժողովրդավարական համակարգի ձեւավորման հիմքը: Դրանց տարբեր մոդելների, պատմական ավանդույթների և կառավարման փորձառության բացակայությունն ինքնըստինքյան ենթադրում էր, որ համակարգի արդյունավետ գործունեությունն ապահովող շատ հարցեր ու մտտեցումներ կձեւավորվեն և իրենց լուծումը կստանան ոլորտի կայացմանը զուգահեռ՝ նկատի ունենալով, որ այդ ինստիտուտի զարգացումն անքակտելիորեն կապված է տեղական ինքնակառավարման՝ որպես կառավարման ապակենտրոնացված ձեւի, տեղական ինքնակառավարման հայեցակարգի մշակման և ինքնակառավարման գործունեությունը կարգավորող օրենսդրության ձեւավորման հետ:

Այս տեսակետից, 1996 թվականի հունիսի 30-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը արդեն չէր համապատասխանում հանրապետությունում ձեւավորվող ու զարգացող տնտեսական, սոցիալական, քաղաքական, գաղափարական իրողություններին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման առկա մակարդակին, դրա համար «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական խարտիայի սկզբունքներին, ինչպես նաև հանրապետության առանձնահատկություններին համապատասխան 2002 թվականի մայիսի 7-ին ընդունվեց տեղական ինքնակառավարման մասին նոր օրենք, որում ամրագրված դրույթները, շուրջ երեք տասնյակ փոփոխություններով ու լրացումներով, նպատակ ունեն ամրապնդել տեղական ինքնակառավարման համակարգի տարածքային, տնտեսական, ֆինանսական և քաղաքական դերը հասարակական հարաբերությունների բնագավառում: Մասնավորապես խոսքը վերաբերում է

ապակենտրոնացման քաղաքականության հետագա խորացմանը, համայնքի ղեկավարի եւ ավագանու լիազորությունների ընդլայնմանը, նրանց եւ պետական կառույցների փոխհարաբերություններին, տեղական նշանակության հարցերին ու համայնքի զարգացման ծրագրերի մշակմանը համայնքի բնակչության մասնակցությունը մեծացնելուն, հրապարակայնության ապահովմանը, որոշումների ընդունման թափանցիկությանն ու այլ հիմնախնդիրներին: Ի դեպ, վերը նշված խարտիայի սկզբունքներին համապատասխան 2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունվել է նաեւ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Նկատի ունենալով, որ տեղական ինքնակառավարման համակարգն ապրում է բնականոն զարգացում եւ ժողովրդավարական այս կարեւոր ինստիտուտի գոյությունը Հայաստանի Հանրապետության 915 համայնքներում՝ այդ թվում, նաեւ Երեւան քաղաքում արդեն իրողություն է, մի շարք հասարակական կազմակերպություններ եւ պետական մարմիններ, թեկուզ ոչ պաշտոնապես, նոյեմբերի 10-ին կազմակերպում են տարբեր միջոցառումներ՝ նվիրված տեղական ինքնակառավարմանը, իսկ 2011 թվականին լրանում է Հայաստանի Հանրապետությունում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրությունների 15 ամյակը, ուստի ներկայացված նախագծով առաջարկվում է տեղական ինքնակառավարման օրը, որպես տոն օր, Հայաստանի Հանրապետությունում նշել յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 10-ին՝ այդ օրն ամրագրելով «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

Հարկ է նշել, որ ներկայումս տեղական ինքնակառավարման օրը, որպես տոն օր, նշվում են մի շարք երկրներում, մասնավորապես՝ Ուկրաինայում՝ դեկտեմբերի 7-ին, Լիտվայում՝ հոկտեմբերի 10-ին, Ավստրալիայում՝ մայիսի 10-ին, իսկ Դոդոստանում՝ հոկտեմբերի վերջին կիրակի օրը: